ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌԻ ՈՐՈՇՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Հարգելի պատճառ որոշելն անհամապատասխանության գործընթացի կարևոր մասն է կազմում: Այն ձեզ և ստացողին հնարավորություն է տալիս ներկայացնել չմասնակցության խնդրին վերաբերվող տեղեկություն, և հաճախակի կարող է հանգեցնել մասնակցության վերսկսմանն ու խուսափել կանխիկ դրամական օգնությունը կորցնելուց:

Հարցազրույցի ժամանակ՝ 1) բացատրեք հարգելի պատճառն ու համապատասխանության գործընթացները, 2) հարցրեք՝ ինչու ստացողը չի հետևել ծրագրի պահանջներին, 3) տեսեք ներոնշյալ հարգելի պատճառի օրինակները և որոշեք, թե արդյոք մասնակցության խնդրի պատճառն այս օրինակներից մեկն էր, թե կար մեկ այլ հարգելի պատճառ: Եթե այո, և այդ պատճառը ստուգված է, ապա առկա է հարգելի պատճառ, 4) որոշեք, թե արդյոք ստացողը կրկնաբար ունենում է մասնակցության նույն խոչընդոտները, թե ոչ: Եթե այո, ստացողն ունի շարունակական խնդիր, և նրան պետք է գնահատել՝ որոշելու համար, եթե նրան պետք է բացառություն անել կամ անհրաժեշտ է ուղարկել հոգեկան առողջության, թմրանյութերի չարաշահման, ընտանեկան բռնության կամ սովորելու հաշմանդամության ծառայություններ ստանալու համար:

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

- Ժամանակավոր հիվանդություն (վերանայել բացառության համար, եթե 30 օրից ավել է)
- Երեխայի կամ ընտանիքի անդամի ժամանակավոր հիվանդություն (վերանայել բացառության համար, եթե 30 օրից ավել է)
- Փոխադրամիջոցի պայմանավորվածությունների խափանում
- Երեխայի խնամքի պակաս
- Համապատասխան հատուկ կարիքների երեխայի խնամքի պակաս
- Երեխայի խնամքի պայմանավորվածության խափանում
- Ապաստանի, խորհրդատվության կամ այլ ծառայությունների մատչելիության պակաս
- Անտնություն
- Մահ ընտանիքում
- Ծանր ընտանեկան ճգնաժամ
- Ֆիզիկական մատչելիության խոչընդոտներ հաշմանդամների համար
- Երկրաշարժ կամ շատ վատ եղանակային պայմաններ, որոնք խոչընդոտել են ճանապարհորդությանը/մասնակցությանը
- Սովորելու անկարողություններ, որոնք չմասնակցելու պատճառի գործոն են կազմում
- Իրավական դժվարություններ
- Դատարանի այցելություններ
- Ժամանակավոր կալանավորում
- Վելֆերից Աշխատանք ծրագրի (Welfare-to-Work) գործո ւնեությունների հեռու գտնվելը
- Լեզվական խոչընդոտներ
- Խտրականություն տարիքի, սեռի, ռասայի, կրոնի, ազգային ծագման, սեռական կողմնորոշման կամ ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով
- Աշխատանք կամ աշխատանքի առաջարկ, որը գերազանցում է աշխատանքի օրական կամ շաբաթական ժամերը, որոնք սովորական են նման զբաղմունքի համար
- Առողջության ու անվտանգության ստանդարտների խ ա խ տ ո ւ մ
- Աշխատողների փոխհատուցման ապահովագրության բացա կայություն
- Աշխատանքի ընդունումը կամ աշխատանքային գործունեության մասնակցությունը կարող է խախտել հաստատված կրթական գործունեություն կամ աշխատանքի համար վարժեցում (բացառությամբ՝ աշխատանքի փորձ կամ համայնքային ծառայություն)
- Միավորման անդամակցության խախտում

Թմրանյութերի չարաշահման ցուցիչներ՝
(վերանայել բացառության համար, եթե զգալի կերպով խանգարում է Վելֆերից Աշխատանք ծրագրիո (Welfare-to-Work) մասնակցելու ունակությանը)

- Կրկնվող առողջական խնդիրներ
- Գործատուի թմրադեղերի անալիզի տապալում
- Թմրանյութերի չարաշահման ընտանիքի/երեխայի պատմու թյուն
- Անկանոն սթափություն (ալկոհոլ չօգտագործելը)

Հոգեկան առողջության ցուցիչներ՝

- Քրոնիկ անտնություն
- Անկանոն կամ սակավադեպ աշխատանքի պատմություն
- Քրոնիկ ընտանեկան կամ հարաբերությունների խնդիրներ
- Անհանգստություն
- Ծանր դեպրեսիա

Ընտանեկան բռնության ցուցիչներ՝

- Ընթացիկ կամ անցյալում տեղի ունեցած բռնություն կամ նեղում (սեռական, ֆիզիկական կամ հուզական)
- Բռնության կամ բռնարարի վախ
- Սաբոտաժ բռնարարի կողմից, երբ զոհը փորձում է անկա խանալ
- Բռնարարը խանգարում է աշխատանքին կամ Վելֆերից Աշխատանք ծրագրի (Welfare-to-Work) գործունեությանը
- Մտահոգություն երեխաների անվտանգության համար
- Համապատասխան ծառայությունների պակաս
- Ֆիզիկական/հոգեկան առողջության/թմրանյութերի չարաշահման խնդիրներ
- Ծանր դեպրեսիա և/կամ անհանգստություն
- Խնդիրներ՝ կապված ժամանակավոր բնակավայրում կամ ապաստանի միջավայրում բնակվելու հետ
- Իրավական խնդիրներ, ինչպես օրինակ՝դատական արգելքներ, ամուսնալուծում, դատարան այցելություններ և այլն
- Համառ հետապնդողի զոհ
- Անտնություն
- Աջակցության համակարգի պակաս (մեկուսացում)
- Ստոկհոլմյան սինդրոմ (գերողի հետ մերձեցում)
- Տնտեսական վերահսկում (բռնարարը թաքցնում կամ վե րահսկում է դրամը, չեկային գրքույկները, խնայողությունները և այլն)

Այլ հարգելի պատճառներ. յուրաքանչյուր գործի համար՝ ինչպես որոշվում է վարչաշրջանի կողմից, որևէ այլ պատճառ, որը ժամանակավորապես արգելում է կամ զգալի կերպ ով խանգարում է ստացողի ունակությանն աշխատել կանոնավոր կերպով կամ այցելել Վելֆերից Աշխատանք ծրագրի (Welfare-to-Work) գործունեությունները: